Հաշվետվություն

Ես՝ Բաբկեն Մկրտչի Գաբրիելյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության վարչությունում (այսուհետ՝ Վարչություն) որպես փորձագետ աշխատելու ժամանակահատվածում (21.10.2025-28.04.2026թթ.) իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Վարչության կողմից իրականացված մշտադիտարկման շրջանակում գործուղվել եմ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնք, որտեղ ուսումնասիրել եմ 1 գնման ընթացակարգի շրջանակներում Վանաձոր համայնքի Սայաթ-Նովայի անվան զբոսայգու հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ-նախահաշիվները, կատարողական ակտերի կազմման ճշտությունը և կատարել համապատասխան տեղատեսություններ: Կատարված մշտադիտարկման արդյունքների հիման վրա կազմել եմ համապատասխան արձանագրություն:

2. Վարչության կողմից իրականացված մշտադիտարկման շրջանակում գործուղվել եմ ՀՀ Արարատի մարզի Արարատի համայնքապետարան, որտեղ ուսումնասիրել եմ գնման ընթացակարգերի շրջանակներում Զանգակատուն, Վարդաշատ և Արմաշ բնակավայրերի ճանապարհների հիմնանորագման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ- նախահաշիվները, կատարողական ակտերի կազմման ճշտությունը և կատարել համապատասխան հսկիչ չափագրումներ: Կատարված մշտադիտարկման արդյունքների հիման վրա կազմել եմ համապատասխան արձանագրություններ:

3. Աջակցել եմ Վարչության գործառույթների շրջանակում իրականացվող աշխատանքներին և կատարել անմիջական ղեկավարի այլ հանձնարարականներ:

ՀՀ ՊՎԾ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության

վարչության փորձագետ Բաբկեն Գաբրիելյան